պ. Տրլիցկին, սրանք են՝

1) Անկանոն դաստիարակութիւն,

2) Հակաառողջապահական պայմաններ դաստիարակութեան միջոցին,

3) Պատանեկական հասակ սեռական հակումների ազդեցութեան ներքոյ,

4) Չափազանցրած մտաւոր աշխատութիւն հակաառողջապահական, բարոյական և ֆիզիկական պայմանների հետ միաժամանակ,

5) Մարդկային գործունէութեան չափազանցրած մրցումն,

6) Մի քանի մաշող հիւանդութիւններ,

7) Ուղեղին ցնցւելը,

8) Ջղային հիւանդութիւններ՝ իստերիա և էպիլեպսիա.

9) Սիֆիլիս,

10) Ալկոհոլիզմ.

11) Մորֆինիզմ և վերջապէս՝

12) Ծերութեան հասակ.

Բրոշիւրի վերջումը կան երկու տոհմագրական աղիւսակներ, որոնք պատկերացնում են պ. Տրլիցկու ասածները ժառանգականութեան մասին.

Առաջին աղիւսակում ցուցակագրած են Յուլիոս կեսարի և Օկտաւիանոս Օգոստոսի այլասերւած յաջորդները.

Միւս աղիւսակը կազմւած է նոյն կերպով վերաբերմամբ աւստրիական տոհմի սպանիական դահի ժառանգներին. Այդ աղիւսակները լուսաբանում են ժառանգականութեան աւերիչ ներգործութիւնը հոգեկան հիւանդութիւնների և բոլոր հոգեբանական ախտերի նկատմամբ.

Բժիշկ Ն. Ումիկեան.

Նոր ստացւած գրքեր

---

1) ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ յիշատակարանը. Հրատարակեց իւր յառաջաբանով Կարապետ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ.

2) ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ.—«Սասմայ ծռեր, Սասունցի Դաւիթ» (ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ). Հրատարակութիւն Թիֆլիսի Հայ. Գրք. Հրատ. Ընկ., Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 50 կ.

3) ՊԱՐՈՆԵԱՆ, Յ. Յ.—«Հոսհոսի ձեռատետրը», «Պտոյտ մը Պոլսոյ թաղերու մէջ» և «Խիկարի գուշակութիւն», մի գրքում ամփոփած, հրատարակութիւն Թիֆլ. Հայ. Գրք. Հրատ. Ընկերութեան. Թիֆլիզ, տպար. Շարաձէի, 1892 թ., գինն է 1 ռուբլի.